

ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԻՏԱԼԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ

ՄԻՋԵՎ

ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Իտալիայի Հանրապետության կառավարությունը, որոնք այսուհետև սույն Համաձայնագրում կանվանվեն Պայմանավորվող կողմեր, լինելով «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիայի կողմեր, որը Չիկագոյում ստորագրման համար բաց է 1944թ. դեկտեմբերի 7-ից,

ցանկանալով ստորագրել համաձայնագիր՝ երկու երկրների միջև օդային հաղորդակցությունները կարգավորելու նպատակով,

համաձայնեցին հետևյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1 ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

Սույն Համաձայնագրի նպատակով, եթե համատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Կոնվենցիա» տերմինը նշանակում է՝ «Միջազգային քաղաքացիական ավիացիայի մասին» Կոնվենցիան, որը Չիկագոյում 1944թ. դեկտեմբերի 7-ից բաց է ստորագրման համար, ներառյալ ցանկացած Հավելված, որն ընդունվել է Կոնվենցիայի 90-րդ հոդվածի համաձայն, և Հավելվածների կամ Կոնվենցիայի ցանկացած փոփոխություն, որը կատարվել է Կոնվենցիայի 90-րդ և 94-րդ հոդվածների համաձայն՝ այնքանով, որքանով այդ Հավելվածներն ու փոփոխությունները ուժի մեջ են երկու Պայմանավորվող կողմերի համար կամ վավերացվել են նրանց կողմից,

բ) «ավիացիոն իշխանություններ» տերմինը նշանակում է՝ Հայաստանի Հանրապետության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն և որևէ անձ կամ մարմին՝ լիազորված կատարելու որևէ գործառույթ, որին սույն Համաձայնագիրը վերաբերում է. Իտալիայի Հանրապետության դեպքում՝ ենթակառուցվածքի և տրանսպորտի նախարարություն և որևէ անձ կամ մարմին՝ լիազորված կատարելու որևէ գործառույթ, որին վերաբերում է սույն Համաձայնագիրը,

գ) «նշանակված ավիաընկերություն» տերմինը նշանակում է՝ ավիաընկերություն, որը նշանակվել և լիազորվել է սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածին համապատասխան,

դ) «տարածք» տերմինը պետության առնչությամբ ունի Կոնվենցիայի 2-րդ հոդվածում նրան տրված նշանակությունը,

ե) «օդային հաղորդակցություն», «միջազգային օդային հաղորդակցություն», «ավիաընկերություն» և «կանգառ ոչ առևտրային նպատակներով» տերմինները ունեն այն նշանակությունները, որոնք նրանց համապատասխանաբար տրված են Կոնվենցիայի 96-րդ հոդվածում,

զ) «տարողության փոփոխություն» տերմինը նշանակում է՝ օդանավի փոփոխություն սահմանված երթուղիների վայրում,

է) «կողի համատեղ օգտագործում» տերմինը նշանակում է՝ յուրաքանչյուր նշանակված ավիաընկերության կողմից իրականացվող շահագործումը, որի ժամանակ օգտագործվում են մյուս ավիաընկերության կողմը և չվերթի համարը՝ ի լրումն իր սեփական կողի և չվերթի համարի:

ՀՈԴՎԱԾ 2

ՉԻԿԱԳՈՅԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Սույն Համաձայնագրի դրույթները կենթարկվեն Կոնվենցիայի դրույթներին այնքանով, որքանով դրանք կիրառելի են միջազգային օդային հաղորդակցությունների համար:

ՀՈԴՎԱԾ 3

ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՏՐԱՍՏԱԴՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին վերապահում է իր միջազգային օդային հաղորդակցությունների հետ կապված հետևյալ իրավունքները.

ա) իր տարածքի վրայով թռիչք կատարել առանց վայրէջքի,

բ) իր տարածքում կանգառել ոչ առևտրային նպատակներով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմին վերապահում է սույն Համաձայնագրով սահմանված իրավունքը՝ երթուղիների ցուցակում սահմանված երթուղիներով օդային հաղորդակցություններ հաստատելու և շահագործելու նպատակով (այսուհետև՝ «սահմանված երթուղիներ» և «համաձայնեցված հաղորդակցություններ»):

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի կողմից նշանակված ավիաընկերությունները սահմանված երթուղիներով շահագործվելիս օգտվում են մյուս Պայմանավորվող կողմի տարածքում երթուղիների ցուցակում նշված վայրերում կանգառներ կատարելու արտոնությունից՝ այն ուղևորներին, բեռները և փոստը օդանավ վերցնելու և օդանավից իջեցնելու նպատակով, որոնք փոխադրվում են առաջին Պայմանավորվող կողմի տարածքից կամ ուղևորվում են դեպի այդ տարածքը:

4. Սույն հոդվածի 2-րդ կետի որևէ դրույթ չպետք է մեկնաբանվի այնպես, թե մի Պայմանավորվող կողմի ավիաընկերություններին արտոնություն է

վերապահվում մյուս Պայմանավորվող կողմի տարածքի մի կետից մյուսը վճարովի կամ վարձակալմամբ օդանավ վերցնել ուղևորներ, բեռներ և փոստ:

ՀՈԴՎԱԾ 4

ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒՄ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա մյուս Պայմանավորվող կողմին գրավոր տեղեկացնել մեկ կամ ավելի ավիաընկերությունների նշանակման մասին՝ սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնելու նպատակով:

2. Տեղեկանալով այդ նշանակման մասին՝ մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունը պետք է, սույն հոդվածի 3-րդ և 4-րդ կետերի դրույթների համաձայն, նշանակված ավիաընկերություններին անհապաղ տրամադրի շահագործման համապատասխան լիազորություն:

3. Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները կարող են մյուս Պայմանավորվող կողմի կողմից նշանակված ավիաընկերություններից պահանջել տրամադրել համապատասխան վկայական առ այն, որ նա որակավորված է ապահովելու այն օրենքներով և կանոններով նախատեսված պայմանների կատարումը, որոնք բնականոն և պատշաճ կերպով կիրառվում են այդ իշխանությունների կողմից իրականացվող միջազգային օդային հաղորդակցությունների նկատմամբ՝ Կոնվենցիայի դրույթներին համապատասխան:

4. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա մերժելու սույն հոդվածի 2-րդ կետում նշված շահագործման լիազորության տրամադրումը կամ առաջադրելու այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են նշանակված ավիաընկերությունների կողմից սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում սահմանված իրավունքների իրականացման համար՝ ցանկացած դեպքում, երբ նշված Պայմանավորվող կողմը համոզված չէ, որ այդ ավիաընկերության սեփականության հիմնական մասը և վերահսկման գերակայող իրավասությունը պատկանում են այն Պայմանավորվող կողմին, որը նշանակել է այդ ավիաընկերությունը, կամ նրա քաղաքացիներին:

5. Այս կարգով նշանակված և լիազորված յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի ավիաընկերություն կարող է ցանկացած ժամանակ սկսել համաձայնեցված հաղորդակցությունների իրականացում՝ պայմանով, որ այդ ավիաընկերությունը ենթարկվի սույն Համաձայնագրի համապատասխան դրույթներին:

ՀՈԴՎԱԾ 5

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅԱՆ ՉԵՂՅԱԼ ՀԱՄԱՐՈՒՄԸ ԿԱՄ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք կունենա չեղյալ համարելու շահագործման լիազորությունը կամ դադարեցնելու սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում սահմանված իրավունքների իրականացումը մյուս Պայմանավորվող կողմի նշանակված ավիաընկերության կողմից կամ

առաջադրելու այնպիսի պայմաններ, որոնք անհրաժեշտ են այդ իրավունքները իրականացնելու համար՝

ա) ամեն դեպքում, երբ նա համոզված չէ, որ նշված ավիաընկերության սեփականության հիմնական մասը և վերահսկման գերակայող իրավասությունը պատկանում են այն Պայմանավորվող կողմին, որը նշանակել է այդ ավիաընկերությանը, կամ նրա քաղաքացիներին,

բ) այդ իրավունքները տրամադրող Պայմանավորվող կողմի օրենքները կամ կանոնները այդ ավիաընկերության կողմից չպահպանվելու դեպքում,

գ) այն դեպքում, երբ ավիաընկերությունը որևէ այլ ձևով թերանում է գործել սույն Համաձայնագրում սահմանված պայմաններին համապատասխան:

2. Եթե սույն հոդվածի 1-ին կետում նշված շահագործման լիազորության չեղյալ համարումը, դադարեցումը կամ պայմանների առաջադրումը կարևոր են օրենքների կամ կանոնների հետագա խախտումները կանխելու համար, ապա այդ իրավունքը կիրականացվի միայն մյուս Պայմանավորվող կողմի հետ խորհրդակցելուց հետո:

ՀՈԴՎԱԾ 6

ՄԱՔՍԱՏՈՒՐԵՐԻՑ ԵՎ ԱՅԼ ՀԱՐԿԵՐԻՑ ԱԶԱՏՈՒՄԸ

1. Մի Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների կողմից միջազգային օդային հաղորդակցություններում շահագործվող օդանավը, ինչպես նաև նրա մշտական օգտագործման սարքավորումները, պահեստամասերը (ներառյալ շարժիչները), մատակարարվող վառելիքը և քսայուղերն ու այդ օդանավում գտնվող պաշարները (ներառյալ սննդամթերքը, խմիչքները և ծխախոտը) մյուս Պայմանավորվող կողմի տարածք մտնելիս վերջինիս կողմից պետք է ազատվեն բոլոր տեսակի մաքսատուրքերից, ստուգման և որևէ այլ վճարից՝ պայմանով, որ այդ սարքավորումները և այլ առարկաները կմնան օդանավում:

2. Նման տուրքերից և վճարներից, բացառությամբ մատուցվող ծառայությունների դիմաց կատարվող գանձումների, պետք է ազատվեն նաև.

ա) մի Պայմանավորվող կողմի տարածք մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների օդանավի կողմից ներմուծված և բացառապես այդ ավիաընկերությունների օդանավի կողմից օգտագործման համար նախատեսված վառելիքը, քսայուղերը, օդանավի պաշարները, պահեստամասերը՝ ներառյալ շարժիչները և օդանավի մշտական օգտագործման սարքավորումները,

բ) վառելիքը, քսայուղերը, օդանավի պաշարները, պահեստամասերը՝ ներառյալ շարժիչները և օդանավի մշտական օգտագործման սարքավորումները՝ վերցված յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում մի Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների օդանավի կողմից, համաձայնեցված հաղորդակցություններ շահագործելիս, այդ Պայմանավորվող կողմի իրավասու մարմինների կողմից սահմանված սահմանների և պայմանների շրջանակներում և նախատեսված բացառապես թռիչքի ընթացքում օգտագործելու համար:

3. Նախորդ կետերում նշված մաքսատուրքերից և այլ վճարներից ազատված նյութերը չեն օգտագործվի ոչ միջազգային օդային հաղորդակցությունների նպատակներով և չօգտագործման դեպքում պետք է վերաարտահանվեն, եթե նրանց փոխանցումը այլ միջազգային ավիաընկերության կամ նրանց մշտական ներմուծումը թույլատրված է շահագրգիռ Պայմանավորվող կողմի տարածքում գործող կանոններին համապատասխան:

4. Սույն հոդվածով սահմանված մաքսատուրքերից և այլ վճարներից ազատումները, որոնք կիրառվում են մաս վերը նշված նյութերի մի մասի նկատմամբ, որոնք օգտագործվում են այդ ազատումները տրամադրած Պայմանավորվող կողմի տարածքով քոչիքի ընթացքում, տրվում են փոխադարձ հիմունքով և կարող են ենթարկվել վերը նշված տարածքում կիրառվող հատուկ ընթացակարգերի, ներառյալ մաքսային ստուգումները:

ՀՈԴՎԱԾ 7

ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերություններին կտրամադրվեն սահմանված երթուղիներով համաձայնեցված հաղորդակցությունների շահագործման արդարացի և հավասար հնարավորություններ:

2. Համաձայնեցված հաղորդակցությունները իրականացնելիս յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունները պետք է հաշվի առնեն մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների շահերը այն նկատառումով, որ անտեղի վնաս չպատճառեն այդ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների կողմից միևնույն ամբողջ երթուղիներով կամ նրանց մի մասով իրականացվող հաղորդակցություններին:

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցություններ իրականացնելիս պետք է հաշվի առնվեն հասարակության պահանջները սահմանված երթուղիներով իրականացվող փոխադրումների նկատմամբ, և նրանց առաջնային նպատակը պետք է լինի ապահովել, ընդունելի ծանրաբեռնվածության գործակցի առկայությամբ, Պայմանավորվող կողմերի տարածքների միջև ուղևորների, բեռների և փոստի փոխադրման գոյություն ունեցող և հետագայում հնարավոր պահանջները բավարարող տարողություն:

4. Մի Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունները յուրաքանչյուր ամառային կամ ձմեռային ժամանակահատվածներից առնվազն երեսուն (30) օր առաջ մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունների հավանությանն են ներկայացնում քոչիքային ժամանակացույցները, ներառյալ շահագործվող օդանավի տեսակի վերաբերյալ տեղեկությունը:

ՀՈԴՎԱԾ 8 ՍԱԿԱԳՆԵՐ

1. Ներքոհիշյալ կետերի նպատակով «սակագին» տերմինը նշանակում է այն գումարը, որը վճարվում է ուղևորների, ուղեբեռների և բեռների փոխադրման համար, ինչպես նաև այն պայմանները, որոնց ներքո այդ գումարը կիրառվում է, ներառյալ գործակալության և այլ օժանդակ ծառայություններին վճարվող գումարները և պայմանները, բացառությամբ փոստի փոխադրման համար վճարների և պայմանների:

2. Մի Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերության կողմից գանձվող սակագները դեպի մյուս Պայմանավորվող կողմի տարածք կամ այդ տարածքից փոխադրման համար պետք է սահմանվեն ընդունելի չափերով՝ հաշվի առնելով բոլոր համապատասխան գործոնները, ներառյալ շահագործման ծախսը, ընդունելի շահույթը և մյուս ավիաընկերությունների կողմից սահմանված սակագները:

3. Սույն հոդվածի 2-րդ կետում նշված սակագները հնարավորության դեպքում պետք է Պայմանավորվող կողմերի նշանակած ավիաընկերությունների միջև դառնան խորհրդակցությունների առարկա:

4. Սակագները պետք է ներկայացվեն երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների հաստատմանը դրանց գործողության մեջ դրվելուց առնվազն վաթսուն (60) օր առաջ: Առանձին դեպքերում այդ ժամանակահատվածը կարող է կրճատվել նշված իշխանությունների համաձայնությամբ:

5. Վերոհիշյալ հաստատումը կարող է ներկայացվել գրավոր: Եթե ավիացիոն իշխանություններից ոչ մեկը հաստատման համար սակագների ներկայացման օրվանից երեսուն (30) օրվա ընթացքում չի հայտնել իր անհամաձայնության մասին, սույն հոդվածի 4-րդ կետին համապատասխան, ապա այդ սակագները համարվում են հաստատված: Այն դեպքում, եթե ներկայացման ժամանակահատվածը կրճատվում է, ինչպես նշված է 4-րդ կետում, ավիացիոն իշխանությունները կարող են համաձայնել, որ անհամաձայնության մասին ծանուցման ժամանակահատվածը պետք է լինի երեսուն (30) օրից պակաս:

6. Եթե սակագինը չի կարող համաձայնեցվել սույն հոդվածի 3-րդ կետին համապատասխան, կամ երբ սույն հոդվածի 5-րդ կետին համապատասխան կիրառվող ժամանակահատվածում մի ավիացիոն իշխանությունը մյուս ավիացիոն իշխանությանը ծանուցում է իր անհամաձայնության մասին սույն հոդվածի 3-րդ կետի դրույթներին համապատասխան համաձայնեցված սակագնի վերաբերյալ, ապա երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները պետք է փորձեն սակագինը սահմանել փոխադարձ համաձայնությամբ:

7. Սույն հոդվածի դրույթներին համապատասխան հաստատված սակագինը պետք է ուժի մեջ մնա մինչև նոր սակագին հաստատելը:

ՀՈԴՎԱԾ 9 ՕՐԵՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Մի Պայմանավորվող կողմի օրենքները, կանոնները և վարչական ցուցումները՝ կապված միջազգային օդանավագնացությունում ընդգրկված օդանավի՝ այդ կողմի տարածք ժամանելու, տարածքում գտնվելու կամ տարածքից մեկնելու կամ այդ տարածքի սահմաններում այդ օդանավի շահագործման կամ օդագնացության հետ, պետք է կիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի կողմից նշանակված ավիաընկերությունների օդանավի նկատմամբ և պետք է կատարվեն այդ օդանավի՝ առաջինը հիշատակված Պայմանավորվող կողմի տարածք ժամանելիս կամ այդ տարածքից մեկնելիս կամ այդ տարածքում գտնվելիս:

2. Մի Պայմանավորվող կողմի օրենքները, կանոնները և վարչական ցուցումները՝ կապված նրա տարածք օդանավի ուղևորների, անձնակազմի, բեռի կամ փոստի ժամանելու, տարածքում գտնվելու կամ տարածքից մեկնելու հետ, ներառյալ՝ մուտքին, մաքսագերծմանը, ներգաղթին, անձնագրերին, մաքսային և կարանտինային ընթացակարգերին վերաբերող կանոնները, պետք է կիրառվեն մյուս Պայմանավորվող կողմի ավիաընկերությունների ուղևորների, անձնակազմի, բեռների կամ փոստի նկատմամբ՝ առաջինը հիշատակված Պայմանավորվող կողմի տարածք ժամանելիս կամ մեկնելիս կամ տարածքում գտնվելու ընթացքում:

ՀՈԴՎԱԾ 10 ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ գործող է ճանաչում մյուս Պայմանավորվող կողմի կողմից տրված կամ հաստատված և դեռևս ուժի մեջ գտնվող՝ պիտանության, որակավորման վկայականները և լիցենզիաները՝ պայմանով, որ այդ վկայականների կամ լիցենզիաների նկատմամբ պահանջները պետք է առնվազն համապատասխանեն այն նվազագույն չափանիշներին, որոնք կարող են սահմանվել Կոնվենցիային համապատասխան: Այնուամենայնիվ, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ կարող է մերժել իր տարածքի վրայով կատարվող թռիչքների համար մյուս Պայմանավորվող կողմի կողմից իր քաղաքացիների համար տրված կամ հաստատված որակավորման վկայականները և լիցենզիաները գործող ճանաչել: Այդ նպատակով յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք ունի օդանավում ձեռնարկելու անհրաժեշտ ապահովական ստուգումներ՝ պայմանով, որ դա չի հանգեցնի օդանավի անտեղի ուշացման:

2. Պայմանավորվող կողմերից յուրաքանչյուրը կարող է խորհրդակցություններ խնդրել՝ կապված ավիացիոն սարքավորումների, թռիչքային անձնակազմների, օդանավի և նրա ցանկացած հաղորդակցության շահագործմանը վերաբերող՝ մյուս Պայմանավորվող կողմի կողմից հաստատված ապահովության չափանիշներին: Եթե նման խորհրդակցություններից հետո մի Պայմանավորվող կողմը հայտնաբերում է, որ մյուս Պայմանավորվող կողմը այդ ոլորտներում արդյունավետորեն չի

պահպանում և կիրառում ապահովության չափանիշները և պահանջները, որոնք առնվազն պետք է հավասար լինեն այն նվազագույն չափանիշներին, որոնք կարող են սահմանվել Կոնվենցիային համապատասխան, ապա մյուս Պայմանավորվող կողմը պետք է ծանուցվի այդ հայտնաբերումների և այն քայլերի մասին, որոնք անհրաժեշտ են համարվում այդ նվազագույն չափանիշներին համապատասխանեցվելու համար, և մյուս Պայմանավորվող կողմը պետք է ձեռնարկի համապատասխան միջոցներ: Հրատապության դեպքում կամ այն դեպքում, երբ մյուս Պայմանավորվող կողմը չի ձեռնարկում համապատասխան միջոցներ խելամիտ ժամանակաընթացքում, յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ իրավունք է ունենում մերժել որևէ շահագործման լիազորության կամ տեխնիկական թույլտվության տրամադրումը, չեղյալ համարել կամ սահմանափակել դրանք:

ՀՈԴՎԱԾ 11

ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերություններին իրավունք է տրամադրում, փոխադարձության հիմունքով, իր տարածքում երթուղիների ցուցակում սահմանված վայրերում ունենալ գրասենյակներ և վարչական, առևտրային և տեխնիկական անձնակազմ՝ ընտրված Պայմանավորվող կողմերից մեկի կամ երկուսի քաղաքացիներից, ինչը կարող է անհրաժեշտ լինել որևէ նշանակված ավիաընկերության պահանջների համար:

2. Երրորդ երկրի քաղաքացիներին յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի տարածքում աշխատանքի վերցնելը պետք է իրականացվի իրավասու իշխանությունների կողմից տրված թույլտվության համաձայն:

3. Վերը նշված ամբողջ անձնակազմը պետք է ենթարկվի մյուս Պայմանավորվող կողմի տարածք ժամանելու և այնտեղ գտնվելու վերաբերյալ օրենքներին, ինչպես նաև այդ տարածքում կիրառվող այլ օրենքներին, կանոններին և վարչական ցուցումներին:

4. Նշանակված ավիաընկերությունների միջև ձեռք բերված համաձայնությամբ սահմանված նման անձնակազմի քանակը պետք է ներկայացվի երկու Պայմանավորվող կողմերի համապատասխան իշխանություններին՝ հաստատման համար:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նշված գրասենյակներին և անձնակազմին կցուցաբերի ցանկացած անհրաժեշտ աջակցություն:

ՀՈԴՎԱԾ 12

ԱՎԻԱՑԻՈՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ

1. Միջազգային իրավունքով նախատեսված իրենց իրավունքներին և պարտավորություններին համապատասխան՝ Պայմանավորվող կողմերը վերահաստատում են, որ իրենց փոխհարաբերություններում անօրինական գործողություններից քաղաքացիական ավիացիայի անվտանգությունը պաշտպանելու իրենց փոխադարձ պարտավորությունը սույն Համաձայնագրի

անբաժանելի մասն է:

2. Պայմանավորվող կողմերը պետք է խնդրանքի դեպքում միմյանց անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերեն՝ քաղաքացիական օդանավի անօրինական գրավումը, այդ օդանավի, դրա ուղևորների և անձնակազմի, օդանավակայանների և օդանավագնացության սարքավորումների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողությունները և քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված որևէ այլ սպառնալիք կանխելու նպատակով:

3. Սույն հոդվածի 1-ին կետում նշված պարտավորություններին զուգահեռ Պայմանավորվող կողմերը պետք է գործեն 1963թ. սեպտեմբերի 14-ին Տոկիոյում ստորագրված «Օդանավում կատարվող հանցագործությունների և այլ գործողությունների մասին» Կոնվենցիայի, 1970թ. դեկտեմբերի 16-ին Հաագայում ստորագրված «Օդանավի անօրինական գրավումը կանխելու մասին» Կոնվենցիայի, 1971թ. սեպտեմբերի 23-ին Մոնրեալում ստորագրված «Քաղաքացիական ավիացիայի անվտանգության դեմ ուղղված անօրինական գործողությունների կանխարգելման մասին» Կոնվենցիայի և քաղաքացիական ավիացիայի անվտանգության վերաբերյալ որևէ այլ կոնվենցիայի դրույթներին համապատասխան, որոնց կողմ են հանդիսանում Պայմանավորվող կողմերը:

4. Պայմանավորվող կողմերը իրենց փոխհարաբերություններում պետք է գործեն Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կողմից հաստատված և Կոնվենցիայի հավելվածներ կազմող ավիացիոն անվտանգության չափանիշներին և ղեկավար ցուցումներին համապատասխան, այնքանով, որքանով դրանք կիրառվում են Պայմանավորվող կողմերի կողմից, և պետք է պահանջեն, որ իրենց գրանցած օդանավը շահագործողները, այն օդանավ շահագործողները, որոնք իրենց տարածքներում ունեն աշխատանքի հիմնական տեղ կամ մշտական բնակության վայր, կամ իրենց տարածքներում գտնվող օդանավակայանների շահագործողները գործեն ավիացիոն անվտանգության այդ դրույթներին համապատասխան: Սույն կետում ավիացիոն անվտանգության ստանդարտների մասին հիշատակումը ներառում է համապատասխան Պայմանավորվող կողմի կողմից ներկայացված ստանդարտների հետ կապված ցանկացած տարբերություն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ նախօրոք տեղեկացնում է մյուս Պայմանավորվող կողմին իր մտադրության մասին՝ ներկայացնելու այդ ստանդարտների հետ կապված ցանկացած տարբերություն:

5. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ համաձայնում է, որ օդանավի այդպիսի շահագործողներից կարող է պահանջվել պահպանել մյուս Պայմանավորվող կողմի կողմից պահանջվող ավիացիոն անվտանգության այն դրույթները, որոնք վերաբերում են այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածք ժամանելուն, տարածքից մեկնելուն կամ այդ տարածքում գտնվելուն: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է ձեռնարկի բոլոր ընդունելի միջոցները իր տարածքում մինչև ուղևորների, անձնակազմի օդանավ նստելը և իջնելը, ինչպես նաև ձեռնաժանրոցների, ուղեբեռների, բեռների և օդանավի պաշարների օդանավ վերցնելը և օդանավից իջեցնելը,

ինչպես նաև այդ գործողությունների ընթացքում օդանավը պաշտպանելու և ուղևորների, անձնակազմի, ձեռնածանրոցների, ուղեբեռների, բեռների և օդանավի պաշարների ստուգումը իրականացնելու համար: Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ պետք է նաև բարյացակամաբար բննի կոնկրետ սպառնալիքի առնչությամբ անվտանգության ընդունելի հատուկ միջոցներ ձեռնարկելու մյուս Պայմանավորվող կողմի կողմից ներկայացված ցանկացած խնդրանք:

6. Երբ տեղի է ունենում միջադեպ կամ միջադեպի սպառնալիք՝ կապված օդանավի անօրինական գրավման հետ, կամ կատարվում են ուղևորների, անձնակազմի, օդանավի, օդանավակայանների և օդանավագնացության միջոցների անվտանգության դեմ ուղղված այլ անօրինական գործողություններ, Պայմանավորվող կողմերը պետք է միմյանց օգնություն ցուցաբերեն՝ հաղորդակցությունները՝ դյուրացնելու միջոցով և նման միջադեպը կամ դրա սպառնալիքը արագ և անվտանգ վերացնելուն ուղղված այլ համապատասխան միջոցներ ձեռնարկելով:

7. Եթե Պայմանավորվող կողմերից մեկը համապատասխան հիմքեր ունի ենթադրելու, որ մյուս Պայմանավորվող կողմը խախտում է սույն հոդվածով նախատեսված ավիացիոն անվտանգության դրույթները, ապա նա կարող է խնդրել անհապաղ անցկացնել խորհրդակցություններ այդ մյուս Պայմանավորվող կողմի հետ: Խորհրդակցությունների անցկացման վերաբերյալ նման խնդրանքի ստացման օրվանից տասնհինգ (15) օրվա ընթացքում բավարար համաձայնության չհասնելը հիմքեր կստեղծի (90) իննսուն օրվա ընթացքում դադարեցնել կամ սահմանափակել երկու Պայմանավորվող կողմերի իրավունքները՝ սույն Համաձայնագրի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 13

ՎԱՃԱՌԸ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄԸ

1. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերություններին իրավունք է տրամադրում ազատորեն կատարել օդային փոխադրման հաղորդակցությունների վաճառքներին տարադրամով և/կամ փոխարկելի տարադրամով, ներառյալ սահմանված երթուղիներով իրականացվող լրացուցիչ հաղորդակցությունները և հաղորդակցության իր ցանցում ու այլ ավիաընկերությունների ցանցերում իրականացվող բոլոր այլ հաղորդակցությունները՝ ուղղակիորեն կամ գործակալների միջոցով:

2. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունները կարող են ազատորեն, առանց որևէ ուշացման կամ սահմանափակման փոխանցել ուղևորների, բեռների և փոստի փոխադրման հետ կապված ծախսերը գերազանցող եկամուտների ավելցուկը (ներառյալ բանկային տոկոսները):

3. Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ապահովում է մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների կողմից նշված փոխանցումների կատարումը ազատ փոխարկելի տարադրամով՝ համապատասխան դիմումը ներկայացնելուց առավելագույնը երեսուն (30)

օրվա ընթացքում: Վերը նշված փոխանցումների նկատմամբ պետք է կիրառվի վաճառքի իրականացման օրը գործող տարադրամի փոխանակման ընթացագիւնը: Նման փոխանցումները պետք է իրականացվեն փոխանակման պաշտոնական ընթացագրի հիման վրա կամ, եթե փոխանակման պաշտոնական ընթացագիրն չկա, ընթացիկ վճարների համար տարադրամի շուկայում գերակայող փոխանակման ընթացագրով:

4. Վերը նշված կետերում սահմանված արտոնությունները պետք է տրվեն բացառապես փոխադարձ հիմունքով: Եթե Պայմանավորվող կողմերից մեկը մյուս Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունների փոխանցումների նկատմամբ սահմանափակում է կիրառում կամ ուշացնում է դրանք, ապա վերջինս պետք է իրավունք ունենա դադարեցնելու առաջինը հիշատակված Պայմանավորվող կողմի նշանակած որևէ ավիաընկերության՝ սույն հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված իրավունքների իրականացումը:

5. Եթե Պայմանավորվող կողմերի միջև վճարումների համակարգը կարգավորվում է հատուկ համաձայնագրով, ապա կկիրառվի այդ համաձայնագիրը:

ՀՈԴՎԱԾ 14 ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սերտ համագործակցության ոգով Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունները ժամանակ առ ժամանակ կխորհրդակցեն միմյանց հետ՝ սույն Համաձայնագրի և նրա Հավելվածի դրույթների իրականացումն ապահովելու և դրանց վերաբերյալ համաձայնություն ձեռք բերելու նպատակով:

2. Եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը գտնում է, որ պետք է փոփոխել սույն Համաձայնագրի որևէ դրույթ, ապա նա կարող է ցանկացած ժամանակ մյուս Պայմանավորվող կողմին գրավոր կերպով առաջարկել այդ փոփոխությունը: Այդ առաջարկված փոփոխության վերաբերյալ երկու Պայմանավորվող կողմերի միջև խորհրդակցությունները կարող են անցկացվել բանակցությունների կամ նամակագրության միջոցով և, եթե այլ բան նախատեսված չէ, պետք է սկսվեն Պայմանավորվող կողմերից մեկի կողմից գրավոր խնդրանքը ստացվելու օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում:

3. Սույն հոդվածի 2-րդ կետին համապատասխան սույն Համաձայնագրում առաջարկվող ցանկացած փոփոխություն ուժի մեջ կմտնի 20-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգին համապատասխան:

4. Այն դեպքում, եթե Պայմանավորվող կողմերից որևէ մեկը գտնում է, որ սույն Համաձայնագրի Հավելվածում պետք է փոփոխություն կատարել, ապա այդ փոփոխությունը կարող է համաձայնեցվել երկու Պայմանավորվող կողմերի ավիացիոն իշխանությունների միջև խորհրդակցության արդյունքում և պետք է հաստատվի գրավոր:

ՀՈԴՎԱԾ 15
ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Եթե Պայմանավորվող կողմերի միջև սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որևէ տարաձայնություն է առաջանում, ապա Պայմանավորվող կողմերը ձգտում են այն կարգավորել բանակցությունների միջոցով:

ՀՈԴՎԱԾ 16
ԲԱԶՄԱԿՈՂՄ ԿՈՆՎԵՆՑԻԱՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Օդային փոխադրման վերաբերյալ բազմակողմ կոնվենցիա կամ համաձայնագիր ստորագրվելու դեպքում, որոնց երկու Պայմանավորվող կողմերը հետևում են, սույն Համաձայնագիրը երկու Պայմանավորվող կողմերի միջև խորհրդակցությունների միջոցով կփոփոխվի այդ կոնվենցիայի կամ համաձայնագրի դրույթներին համապատասխան:

ՀՈԴՎԱԾ 17
ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Մի Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանությունները պետք է մյուս Պայմանավորվող կողմի ավիացիոն իշխանություններին խնդրանքի դեպքում տրամադրեն պարբերական վիճակագրական տվյալներ կամ այլ համանման տեղեկություն դեպի այդ մյուս Պայմանավորվող կողմի տարածք կամ այդ տարածքից նշանակված համապատասխան ավիաընկերությունների կողմից համաձայնեցված հաղորդակցություններով իրականացվող փոխադրումների վերաբերյալ:

ՀՈԴՎԱԾ 18
ԳՐԱՆՑՈՒՄ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Սույն Համաձայնագիրը և նրա ցանկացած հետագա փոփոխությունը պետք է գրանցվեն Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությունում:

ՀՈԴՎԱԾ 19
ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ ցանկացած ժամանակ կարող է մյուս Պայմանավորվող կողմին ծանուցել սույն Համաձայնագիրը դադարեցնելու իր որոշման մասին: Այդ ծանուցումը պետք է միաժամանակ ուղարկվի Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպությանը: Այդ դեպքում Համաձայնագրի գործողությունը կդադարի մյուս Պայմանավորվող կողմի կողմից ծանուցման ստացման օրվանից տասներկու

(12) ամիս հետո, եթե մինչև այդ ժամկետի ավարտը փոխադարձ համաձայնությամբ դադարեցման մասին ծանուցումը հետ չվերցվի: Մյուս Պայմանավորվող կողմի կողմից նման ծանուցման ստացման մասին որևէ տեղեկության բացակայության դեպքում վերոհիշյալ ծանուցումը կհամարվի Միջազգային քաղաքացիական ավիացիայի կազմակերպության կողմից ստացված ծանուցումը ստանալուց տասնչորս (14) օր հետո:


ՀՈԴՎԱԾ 20 ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ կմտնի ծանուցումներից վերջինի ստացման օրվանից, որոնցով երկու Պայմանավորվող կողմերը միմյանց կհայտնեն վավերացման իրենց համապատասխան ընթացակարգերի ավարտի մասին:


Ի վկայություն վերոշարադրյալի՝ ներքոստորագրյալները, լինելով պատշաճ կերպով լիազորված իրենց համապատասխան կառավարությունների կողմից, ստորագրեցին սույն Համաձայնագիրը:

Կատարված է Երևան քաղաքում 2002 թ. հուլիսի 18-ին, երկու բնօրինակով, հայերեն, իտալերեն և անգլերեն, ընդ որում բոլոր տեքստերը հավասարազոր են: Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման հետ կապված որևէ տարաձայնության դեպքում նախապատվությունը կտրվի անգլերեն տեքստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ԻՏԱԼԻԱՅԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ՝



ՀԱՎԵԼՎԱԾ

ԵՐԹՈՒՂԻՆԵՐԻ ՅՈՒՑԱԿ

Երթուղիների ցուցակ I

Հայաստանի Հանրապետության նշանակած ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիներ.

Վայրեր Հայաստանում - Միջանկյալ վայրեր Եվրոպայում - Հոմ - Եվրոպայում գտնվող վայրերից դուրս և հակառակը:

Երթուղիների ցուցակ II

Իտալիայի Հանրապետության նշանակած ավիաընկերությունների կողմից շահագործվող երթուղիներ.

Վայրեր Իտալիայում - Միջանկյալ վայրեր Եվրոպայում - Երևան - Եվրոպայում/Ասիայում գտնվող վայրերից դուրս և հակառակը:

Նշումներ

ա) Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի նշանակած ավիաընկերությունները կարող են որոշ կամ բոլոր չվերթերում բաց թողնել վերը նշված ցանկացած միջանկյալ և/կամ սահմաններից դուրս գտնվող վայր՝ պայմանով, որ համաձայնեցված հաղորդակցությունները երթուղիներով սկսվեն կամ ավարտվեն այն Պայմանավորվող կողմի տարածքում, որը նշանակել է ավիաընկերությունները:

բ) Երթուղիները կշահագործվեն երթևեկության երրորդ և չորրորդ ազատության իրավունքների ամբողջ ծավալով:

գ) Միջանկյալ և սահմաններից դուրս գտնվող վայրերը կշահագործվեն առանց որևէ աշխարհագրական կամ հրահանգային սահմանափակման: